ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ ՄԻՔԱՅԵԼԻ

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1908-1915 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ Արմենակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի

պատմական գիտությունների թեկնածու
Սահակյան Վերա Գուրգենի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թ. նոյեմբերի 18-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հոկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915թթ.» թեման հայ պատմագիտության մեջ ուսումնասիրված է հպանցիկ, այն էլ առանձին պատգամավորների գործունեության շրջանակներում: Հիմնախնդրի խորքային հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն ծանրակշիռ ներդրումը, որ հայազգի պատգամավորներն ունեցել են Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգերի հաստատման և ամրապնդման գործում, ինչպես նաև երիտթուրքերի գործադիր և օրենսդիր մարմինների ազգայնամոլ գործունեությունը, իրականացրած ընտրակեղծիքները, խոսքի և գործի միջև առկա հակասությունները, արևմտահայության կենսական խնդիրների անտեսումը և այլն:

Օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեության բացահայտումը արդիական հնչեղություն ունի մեր օրերում Թուրքիայի Հանրապետության Ազգային Մեծ ժողովում ներկայացված ոչ թուրք պատգամավորների և իրենց թուրք գործընկերների աշխատանքային հարաբերությունների համատեքստում:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների 1908-1915թթ. գործունեությունը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Բացահայտել ընտրական իրավունքի իրացման ընթացքը Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև իթթիհատի ապօրինություններն ընտրական գործընթացներում:
- Ներկայացնել նոր ձևավորվող օսմանյան խորհրդարանի կառուցվածքը, պատգամավորների ազգային, կրոնական և քաղաքական պատկանելիությունը, խորհրդարանական խմբերի և խմբակցությունների ձևավորումը ու դրանցում հայ պատգամավորների ներգրավվածությունը:
- Անդրադառնալ 1909թ. կիլիկիահայերի կոտորածի կազմակերպիչներին և իրագործողներին՝ հիմք ընդունելով հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանի գլխավորած խորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը, նրա կազմած զեկուցագիրը և դրա արձագանքները խորհրդարանում:
- Ուսումնասիրել համակայսերական դատաիրավական, վարչատնտեսական և սոցիալական խնդիրներին խորհրդարանի անդրադարձները և հայ պատգամավորների ջանքերը Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության բարելավման ուղղությամբ:
- Ներկայացնել խորհրդարանական քննարկումներում հայազգի պատգամավորների մղած պայքարը արևմտահայության համար կենսական նշանակություն ունեցող հողային հարցի լուծման համար:
- Լուսաբանել այլազգիների նկատմամբ երիտթուրքերի անհանդուրժողական քաղաքականությունը և դրա արդյունքում խորացած ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ հայ պատգամավորների ջանքերը:
- Գնահատել 1912-1914թթ. Հայկական հարցի վերարծարծման ընթացքում հայազգի պատգամավորների գործունեությունը և երիտթուրքերի դիրքորոշումը:
- Լուսաբանել 1914թ. խորհրդարանական ընտրությունները և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի դերը հայ պատգամավորների ընտրության հարցում:
- Անդրադառնալ իթթիհատի իրականացրած ցեղասպանությանը, որին զոհ գնացին արևմտահայությունը և նրա գործող պատգամավորների մի մասը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների և արժեքավոր գրականության համադիր քննության, ներկայացված փաստերի պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության մեթոդների կիրառմամբ: Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսակետից մեթոդական իմաստով աշխատանքում խիստ կարևորվել է համալիր մոտեցումը ինչպես սկզբնաղբյուրներին, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրություններին:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1908-1915թթ.: Քննադատված են երիտթուրքական հեղաշրջման, սահմանադրական կարգերի վերահաստատման, խորհրդարանի ձևավորման և մինչև 1915թ. գործունեության հիմնահարցերը:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է 1908-1915թթ. օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների գործունեության, նրանց ներկայացրած խնդրագրերի, հիշատակագրերի, ելույթների, բանավեճերի, դրանց բովանդակության, խորհրդարանի՝ արևտահայության խնդիրներին վերաբերող օրինագծերի և նախաձեռնությունների վերլուծության ու արժևորման մեջ: Գիտական նորույթ են նաև 1908, 1912 և 1914թթ. խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգի, թույլ տրված ընտրախախտումների, ոչնչով չվերահսկվող ընտրակեղծարարության, հայ և այլազգի պատգամավորների հարաբերությունների, նրանց միջև առկա խորքային հակասությունների բացահայտումներն ու գնահատականները: Նույն կերպ, առաջին անգամ են համակողմանիորեն լուսաբանվում երկրի ներքաղաքական դրության կայունացմանն ուղղված հայազգի պատգամավորների գործադրած ջանքերը, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պայմաններում հայ ժողովրդի ազատ տեղաշարժի, կյանքի և գույքի ապահովությանը միտված նրանց օրենսդրական նախաձեռնությունները:

Ներկայումս մեր պատմագիտության մեջ չկա օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեության վերաբերյալ հանգամանալի և համակողմանի հետազոտություն, ինչպես նաև հետազոտվող թեմայի առաջադրած խնդիրների լուսաբանմանը նվիրված մենագրություն: Ատենախոսության մեջ շրջանառվող փաստական նոր նյութերն ու եզրահանգումները կնպաստեն երիտթուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելուն: Ներկայացված փաստերը և դրանց մեկնաբանությունները կհակադարձեն թուրք պատմաբանների կեղծարարությանը և կբացահայտեն գիտական և տեղեկատվական հարթություններում իրադարձությունները գլխիվայր ներկայացնելու նրանց ճիգերը:

Ատենախոսությունն ունի նաև արդիական, գործնական նշանակություն: Ուսումնասիրության ընթացքում կատարված փաստերի համադրումը և դրանց արդյունքում կատարված եզրահանգումները կարող են օգտակար լինել Հայոց պատմության դասընթացներում և դասագրքերում: Ատենախոսությունում ներկայացված դրվագները կարող են ծառայել որպես պատմական հենք ՀՀ դիվանագիտական գերատեսչության ներկայացուցիչների համար:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Հիմնահարցի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են Հայաստանի ազգային արխիվի «Ամենայն

հայոց կաթողիկոսի դիվան»[1], ինչպես նաև «Հայ Հեղափոխական Դաշնակցություն»[2] ֆոնդերում պահպանված փաստաթղթերը: Հայկական բարեռորոգումների քննարկումներում հայազգի անվանի պատգամավոր Գ. Զոհրապի ներգրավվածության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի «Գրիգոր Զոհրապ» ֆոնդում[3]: Օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների արտախորհրդարանական գործունեության մասին հույժ կարևոր վկայություններ կան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանի 288 վավերագրում [4]: Հիմնախնդրի ուսումնասիրության համար օգտագործվել են նաև ՌԴ «Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի» «Канцелярия министра иностранных дел»[5] և «Посольство в Константинопле»[6] ֆոնդերի նյութեր:

«Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915թթ.» ատենախոսության արժեքավոր աղբյուրներ են ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուները: Հիմնահարցի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են Մ. Ներսիսյանի[7], Վ. Միքայելյանի[8], Վարուժան արքեպիսկոպոսի խմբագրած գրքի[9] , Ա. Վիրաբյանի[10], Զ.Կիրակոսյանի[11] , Ե. Փամպուքեանի խմբագրությամբ հրատարակված հատորների[12] և Ա. Բալոյանի[13] աշխատասիրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուները: Որքան էլ արխիվային նյութերը և փաստաթղթերի ժողովածուները անգնահատելի և արժեքավոր լինեն, դրանցում բացակայում են օսմանյան խորհրդարանի նիստերի սղագրությունները, հայազգի պատգամավորների ելույթները և օրենսդրական նախաձեռնությունները: Այդ բացը լրացնում է Թուրքիայի Հանրապետության Ազգային Մեծ ժողովի թվայնացված արխիվը[14]: Բարեբախտաբար պոլսահայ մամուլը՝ «Բյուզանդիոն», «Ժամանակ» և «Ազատամարտ»

---

[1] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 14:

[2] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1457, ց.1, գ. 81ա:

[3] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, ֆ. Գրիգոր Զոհրապ, գ. 73:

[4] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանատուն, վավերագիր 288:

[5] АВПРИ, ф. 113, Канцелярия министра иностранных дел, оп. 470, д. 115.

[6] АВПРИ, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3728.

[7] Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, Ер., 1983.

[8] Армянский вопрос и геноцид армян в Турции, материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, отв. ред. Микаелян В.А., Ер., 1995.

[9] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա, 2011:

[10] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Եր., 2004:

[11] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

[12] Նիւթեր Հ.Յ. դաշնակցութեան պատմութեան համար, Ժ հատոր, խմբագիր Երուանդ Փամպուքեան, Պեյրութ, 2014, Նիւթեր Հ.Յ. դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ հատոր, խմբագիր Երուանդ Փամպուքեան, Պեյրութ, 2016:

[13] Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923թթ., հատոր Ա, 1913-1917, աշխատասիրությամբ Ա. Բալոյանի, Երևան, 2008:

[14] Meclisi Mebusan Zabıt Ceridesi, dönem 1 içtima 01- 04 ,dönem 2 içtima 01,dönem 3 içtima f01,01, 02.

թերթերը տպագրել են օսմանյան խորհրդարանի նիստերի արձանագրությունները, որոնք հիմնականում համընկնում են թուրքական արխիվի նյութերին:

Ատենախոսության համար սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել հայ պատգամավորների և երիտթուրք պաշտոնյաների հուշերը, ուսումնասիրությունները և հաշվետվությունները: 1908-1915թթ. Օսմանյան խորհրդարանում հայ և այլազգի պատգամավորների գործունեության, նրանց նպատակների և քաղաքական դիրքորոշումների մասին հույժ արժեքավոր տեղեկություններ կան օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորներ Գրիգոր Զոհրապի[15], Վահան Փափազյանի[16], Գեղամ Տեր--Կարապետյանի[17], Գարեգին Փաստրմաջյանի (Արմեն Գարո) հուշերում[18] և ուսումնասիրություններում ինչպես նաև Հակոբ Պապիկյանի զեկուցագրում[19]:

Ատենախոսության թեման ուսումնասիրելիս կարևորություն ենք տվել ոչ միայն պատգամավորների, այլ նաև ժամանակի հայ ազգային և քաղաքական գործիչների հուշերին: Դրանց մեջ առանձնանում են պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի[20], ՀՅԴ հայտնի քաղաքական և պետական գործիչ Ռուբենի[21], Մ. Վարանդյանի[22], Կարո Սասունու[23], Հարություն Շահրիկյանի[24], Եղիշե Թոփչյանի[25], Ս.Սապահ Գյուլյանի[26], Հ. Երամյանի[27], Ա.Դարբինյանի[28], Վ. Մալեզեանի[29], Գրիգոր Մարգարյանի[30], Լեոյի[31] և այլոց հուշագրություններն ու աշխատությունները:

Երիտթուրքական հեղաշրջման, Հայոց ցեղասպանության վերաբերյալ արժանահավատ փաստեր կան նաև իրադարձությունների թուրք ժամանակակից Մեվլան Զադե Ռիֆաթի աշխատությունում[32]:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում կարևորել ենք նաև Կ. Պոլսի օտարերկրյա դեսպանների և դեսպանատների աշխատակիցների հուշերն ու ուսումնասիրությունները: Իթթիհատական ղեկավարների ներքին և արտաքին քաղաքականության մասին ուշագրավ և արժանահավատ ենք համարել Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի

---

[15] Զohրապ Գ., Երկերի ժողովածու, հ. Գ, Եր., 2002, հ. Դ, Եր., 2003, հ. Ե, Եր., 2004, հ. Զ, Եր., 2004:

[16] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ., Պէյրութ, 1952:

[17] Գեղամ Տեր-Կարապետեան, Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ.Պոլիս, 1911: Տարօնի աշխարհ, պատկերներ ու պատմուածքներ, Փարիզ 1931:

[18] Արմեն Գարօ (Գարեգին Փաստրմաճեան), Ապրուած օրեր, 1990:

[19] Պապիկեան Յ., Ատանայի եղեռնը, Հալէպ, 2009:

[20] Զաւէն պատրիարք, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Թեհրան, 2014:

[21] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 4, հ. 5, հ. 6, Երևան, 1991:

[22] Վարանդյան Մ., Հայ Հեղափոխական Դաշնակցության պատմություն, Եր., 1992:

[23] Սասունի Կ., Ապրիլեան եղեռնը քննական ակնոցով, Փարիզ, 1931:

[24] Շահրիկեան Հ., Հայկական ռեֆորմները Թուրքիայում, Ա., տ.,:

[25] Թոփչյան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Մասն առաջին, Թիֆլիս, 1909:

[26] Սապահ Գիւլեան Ս., Երիտասարդ Թուրքիա, Պարիզ, 1908թ.:

[27] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատոր Ա, Ալեքսանդրիա, 1929:

[28] Դարբինեան Ս., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947:

[29] Մալէզեան Վ., Ճամփուս ծայրը, Բ հատոր, Փարիզ, 1955:

[30] Մարգարեան Գ., Օսմանեան պատմութիւն, Կ.Պոլիս, 1912:

[31] Լէո, Անցյալից: Հուշագրություն, Եր., 2009:

[32] Մեվլան Զ.Ռ., Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Եր., 1990:

Մորգենթաուի[33], Էրզրումի սեկտորի ընդհանուր վերատեսուչ ընտրված հոլանդացի Լ. Կ.Վեստենենկի[34] հուշերը և ռուսական դեսպանատան առաջին թարգման Անդրեյ Մանդելշտամի աշխատությունները[35]:

Իթթիհատի պարագլուխների տեսակետների հետ ծանոթանալու նպատակով ատենախոսության թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք նաև երիտթուրք ղեկավարներ Ջեմալ[36], Թալեաթ[37] Էնվեր[38], Սայիդ Հալիմ[39], Մահմուդ Շևքեթ[40] փաշաների և Ահմեդ Ռիզա բեյի[41] հուշագրական նոթերը: փաշաների հուշագրական նոթերը: Ակնհայտ հակասություններ կան Թալեաթի ու Ջեմալի հուշերի և Կիլիկիայի հայկական ջարդերի խորհրդարանական քննարկումներում ներկայացված տեղեկությունների միջև, ինչը հետին թվով կիլիկիահայերի կոտորածի մեջ երիտթուրքերի մասնակցությունը սրբագրելու հետևանք է:

Արևմտյան Հայաստանի, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդիրներին նվիրված արժեքավոր հետազոտություններ են կատարվել 20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարասկզբում: Դրանցում հեղինակները արևմտահայության պատմության բազում հիմնախնդիրներին զուգահեռ անդրադարձել են նաև օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեությանը: Խորհրդահայ պատմագրության ներկայացուցիչներից պրոֆ. Ջոն Կիրակոսյանը «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը»[42] և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»[43] մենագրություններում ոչ միայն ներկայացրել է Օսմանյան կայսրության հայ բնակչության իրավազուրկ կացությունը, երիտթուրքական հեղաշրջման հետևանքները, հայ քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի փոխհարաբերությունները, այլև հպանցիկ անդրադարձել հայազգի որոշ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությանը:

Օսմանյան կայսրության ներքաղաքական դրության վերաբերյալ մեր թեմային առնչվող որոշակի տեղեկություններ կան պրոֆ. Մակիչ Արզումանյանի «Հայաստան 1914-1917» աշխատությունում[44]:

---

[33] Մորգենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Եր., 1990:

[34] Դյուսեն վան դեր Յան, Հայկական օրագիր, Եր., 2008:

[35] Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, առաջին մաս, Երիտասարդ թուրքերը պատերազմեն առաջ, Կ.Պոլիս, 1919: Երիտասարդ թուրքերի պետությունը, Էջմիածին, 1916:

[36] Записки Джемал-Паши 1913-1919гг., Тифлис, 1923.

[37] Talaat Paşa'nin hatırları, Kaynevi Y., Istanbul,1946.

[38] Enver Paşa'nın anıları (1881-1908), H. E. Cengiz, İstanbul, 1991, 142 s.

[39] Said Halım Paşa, Buhranlarımız, M. Ertuğrul Düzdağ, İstanbul, Ա. տ., 211 s.

[40] Mahmut Şevket Pasha'nın Günluğu, Istanbul ARBA arştırma Basım Yayın, 1988.

[41] Ahmet Riza, Anılar, İstanbul, 2001, 111 s.

[42] Կիրակոսյան Ջ.Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, 1967:

[43] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, (19-րդ դարի 90-ական թթ. - 1914թ.), գիրք առաջին, Եր., 1982: Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, (19-րդ դարի 90-ական թթ. - 1914թ.), գիրք երկրորդ, Եր., 1983:

[44] Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969:

Պրոֆ. Ազատ Համբարյանի «Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.)»[45] և «Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914թթ. »[46] մենագրությունները մեզ օգնել են ճշգրիտ պատկերացնել օսմանյան խորհրդարանում հայազգի պատգամավորների տնտեսական բնույթի հարցապնդումների և առաջարկների էությունը:

20-րդ դարասկզբի հայոց պատմության հիմնախնդիրների լուսաբանմանն է նվիրված ակադ. Հրաչիկ Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատությունը[47]: Ուսումնասիրության թեմայի շրջանակներում կարևորել ենք նաև Հ. Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ)» և «1912-1913թթ. Բալկանյան պատերազմները և հայերը» աշխատությունները[48]:

Երիտթուրքական հեղաշրջման հետևանքների, իթթիհատականների ներքին քաղաքականության, հայ և թուրք քաղաքական ուժերի միջև հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից արժեքավոր են Վ. Թունյանի[49], Ե. Ճերեճյանի[50] և Գ. Խուդինյանի[51] աշխատությունները:

Հայ պատգամավորների խորհրդարանական գործունեության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ է հեղինակել վաստակաշատ պատմաբան և ցեղասպանագետ Վահագն Տատրյանը[52]: Ցեղասպանության հիմնախնդիրների լուսաբանմանը զուգահեռ նա անդրադարձել է խորհրդարանական այն ելույթներին ու քննարկումներին, որոնք վերաբերել են երիտթուրքերի ազգայնամոլությանը և հանցավոր գործունեությանը:

Օսմանյան երկրորդ սահմանադրական շրջանի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև ռուս պատմաբանները: Երիտթուրքական հեղափոխության և սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Վ. Շպիլկովայի[53], Կ.

---

[45] Համբարյան Ա.Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.), Երևան, 1979:

[46] Համբարյան Ա.Ս., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Արմավիր, 2003:

[47] Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, Եր., 2009: Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, Եր., 2013:

[48] Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Եր., 2009: 1912-1913թթ. Բալկանյան պատերազմները և հայերը, Եր., 2014:

[49] Тунян В., Младотурки и армянский вопрос, Часть первая, 1908-1912гг., Ереван, 2004.

[50] Ճէրէճեան Ե., Մեծն Մուրատ (Համբարձում Բոյաջյան), Եր., 2016:
1912ի Օսմանեան երեսփոխանական ընտրութիւնները և արևմտահայութիւնը, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԻԷ, Պէյրութ 2007, էջ103-160:

[51] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895թվականի վերջերը), Եր., 2006:

[52] Տատրյան Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Մասաչուսեթս, 1995: История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ер., 2007. Геноцид армян: содержание преступления, Ер., 2005.

[53] Шпилькова В. И., Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977.

Շացիլլոյի[54], Զ. Յախիմովիչի[55], Մ. Լազարևի[56], Ա. Միլլերի[57], Յու. Մուրանովի[58] և Գ. Ալիևի[59] ուսումնասիրություններում:

Ուսումնասիրության առարկա դարձած հիմնախնդրի հետ կապված տարաբնույթ հարցերի պարզաբանման համար կարևորել ենք նաև Ա. Խառատյանի[60], Ռ. Սաֆրաստյանի[61], Վ. Բայբուրդյանի[62], Հ. Մինասյանը[63], Ա. Շարուրյանի[64], Լ. Չորմիսեանի[65], Է. Կոստանդյանի[66], Ա. Աթայանի[67], Ս. Մանվելյանի[68], Ա. Ներսիսյանի[69], Ա. Հարությունյանի[70], Ն. Խնկոյանի[71] , Մ. Մարտիրոսյանի[72] և այլոց մենագրություններն ու հոդվածները:

Թուրքական պատմագիտության մեջ Օսմանյան սահմանադրական երեք շրջանները հանգամանորեն ուսումնասիրել է Թարիք Զաֆեր Թունայան: Հեղինակը թուրքական քաղաքական կուսակցությունների պատմությանը նվիրված եռահատոր աշխատությունում ներկայացրել է նաև օսմանյան սահմանադրությունը և նրա կրած փոփոխությունները: Մեր

---

[54] Шацилло К. В., Россия перед первой мировой войной, М.,1974.

[55] Яхимович З. П., Итало-Турецкая война, Москва, 1967.

[56] Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), Москва, 1972.

[57] Миллер А. Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, Москва, 1983.

[58] Муранов Ю. В., Пантюркизм и панисламизм младотурок (1908-1918гг.), «Краткие сообщения Института народов Азии», т. XIV, Москва, 1961, стр. 36-56. Политика младотурок по национальному вопросу (1908-1912гг.), «Краткие сообщения Института народов Азии», т. XXX, Москва, 1962, стр. 161-172.

[59] Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918гг.), М., 1972.

[60] Խառատյան Ա., Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922թթ.), Երևան, 2015:

[61]Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009:

[62] Բայբուրդյան Վ. Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008:

[63]Մինասյան Հ., Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի հանրապետությունում և հարակից տարածքներում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ, Երևան, 2014:

[64] Շարուրյան Ա. Ս., Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Ս. Էջմիածին, 1996:

[65] Չորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Գ հատոր (1908-1922), Բեյրութ, 1975:

[66] Կոստանդյան Է., Գրիգոր Զոհրապն արևմտահայոց ազգային ժողովում և օսմանյան խորհրդարանում, Վէմ համահայկական հանդես, № 4 Երևան 2011, էջ XXII-XXXIII:

[67] Աթայան Ա., Հայ մտավորականությունը՝ ցեղասպանության զոհ, Հայագիտական հանդես, № 6, Ստեփանակերտ 2015, էջ 248-256:

[68] Մանվելյան Ս., Օսմանյան խորհրդարանի 1914թ. ընտրությունները և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը, Պատմաբանասիրական հանդես, № 1, Երևան 2019, էջ 135-143:

[69] Ներսիսյան Ա., Դաշնակցության գործունեությունն Օսմանյան խորհրդարանում և դրա արդյունավետության հարցը, Կանթեղ, № 4, Երևան, 2006, էջ 168-174:

[70] Հարությունյան Ա. Հ., Օսմանյան խորհրդրանանի պատգամավոր Ա.Վռամյանի ծածկագիր նամակը՝ ուղղված Թալեաթին, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, Երևան, 2013, էջ 3-14: Նախընտրական պայքարը Վանում և 1908թ. խորհրդարանական երկրորդ ընտրությունները Օսմանյան Թուրքիայում, Պատմաբանասիրական հանդես, № 2, Երևան 2010 էջ 27-40:

[71] Хнкоян Н.С., Выборы 1912 года В Турции и формирование антимладотурецкого блока, Լրաբեր հասարակական գիտությունների, №7, Երևան, 1990, էջ 44-52:

[72] Մարտիրոսյան Մ., Գ. Զոհրապը և Հայկական հարցը, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, № 2, Երևան, 1989, էջ 45-49: Գրիգոր Զոհրապի դերը 1913թ. ռուս-գերմանական համաձայնության կայացման գործում,Պատմաբանասիրական հանդես, №3 , Երևան, 2023, էջ 72-92:

ուսումնասիրության թեմային առնչվում է աշխատության առաջին հատորը[73]: Աշխատանքը կարևորվում է նրանով, որ հեղինակն ունեցել է անձնական շփումներ ժամանակակիցների հետ: Երիտթուրքերի ազգային քաղաքականությանը տված նրա գնահատականները միակողմանի են և անազնիվ:

Թուրք պատմաբաններից թեմային անդրադարձել են նաև Սադի Քոչաշը[74], Ռեջեփ Քարաջաքայան[75], Ք. Օլգունը[76], Ա. Քուրանը[77], Է. Զուրչերը[78], Հ. Քայալին[79] և Շ. Հանիօղլուն[80], որոնց տված գնահատականներն ակնհայտորեն աչառու են ու միակողմանի:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ-ում կազմակերպված հանրապետական և միջազգային գիտաժողովներում հրապարակված հայերեն և անգլերեն հոդվածներում և մեկ գրքում՝ համահեղինակությամբ: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարարական-քաղաքական մտքի պատմության բաժնի կողմից:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 196 էջ:

Ներածությունում հիմնավորված են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված են ատենախոսության գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական սահմանները և սկզբնաղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Սահմանադրական կարգերի հաստատումը Օսմանյան կայսրությունում», բաղկացած է երեք ենթագլխից: Ներկայացված են Օսմանյան կայսրության ընդդիմադիր քաղաքական ուժերի համագործակցության փորձերը, երիտթուրքական հեղաշրջման նախապատրաստումն ու իրականացումը: Տրված են նաև խորհրդարանական ընտրությունների բնութագիրը, խորհրդարանի կառուցվածքը և կազմը: Լուսաբանված են հայ պատգամավորների նախաձեռնությունների նկատմամբ երիտթուրքերի դիրքորոշումները: Քննության են առնված 1909թ. կիլիկիահայերի կոտորածները և դրանց իրական գնահատական տված խորհրդարանական քննիչ հանձնաժողովի նախագահ Հ. Պապիկյանի գործունեությունը: Կատարված է անդրադարձ ՀՅԴ-իթթիհատ գործակցությանը:

---

[73] Tunaya T.Z. Türkiye'de Sıyasal Partiler, Cilt 1: Ikinci meşrutiyet Dönemi, 1908-1918, Istanbul, Kronik Kitap, 1988.

[74] Koçaş S., Tarıh Boyunca Ermeniler ve Türk-Ermeni Ilişkileri, Ikinci Baskı, Ankara, Altınok matbaası, 1967.

[75] Karacakaya R., Meclisi Mebusan Secimleri ve Ermneniler (1908-1914), Istanbul Univeristesi Yakin Dönem Turkiye Arastırmaları Dergisi, s. 65, Istanbul 2013, s. 127-142, Istanbul, 2003.

[76] Olgun K., 1912 Meclis-i Mebusan secimlerinde Ermeniler ve Ermeni milletvekilleri, Uluslararasi Insan Bilimleri Drgisi, cilt 14, sayi 3, s. 2688-2702, Adabazari, 2017.

[77] K u r a n A., Osmanlı imparatorluğunda inkilâp hareketler ve ailli mücadele. Istambul, yayl. y.,1956.

[78] Zurcher E., The young Turks Legacy and Nation Building, London, I. B. Tauris & Co Ltd, 2010.

[79] Kayali H., Arabs and Youg Turks, Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918, Los Angeles, University of California press, 1997.

[80] Hanioğlu Ş., The Young Turks in opposition, New York, Oxford University Press, Ins, 1995. Preporation for a Revolution, The Young Turks 1902-1908, New York, Oxford University Press, 2001.

Երկրորդ գլուխը՝ «Օսմանյան խորհրդարանը 1910-1912թթ.», բաղկացած է հինգ ենթագլուխներից: Ներկայացված են սահմանադրական կարգերի վերահաստատումից հետո Օսմանյան կայսրությունում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը կամ շրջանցմանը միտված խմբակցությունների և անհատ պատգամավորների հեղինակած օրենքների նախագծերը: Դիտարկված են խորհրդարանի կողմից օսմանյան քաղաքացիների անձի և գույքի ապահովությանը, նրանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրինագծերը, ինչպես նաև ոչ մահմեդականների զինծառայության մասին թերի օրենքի ընդունումը: Քննարկված է հայ պատգամավորների կողմից բարձրացված հողային հարցը: Բնութագրված են երիտթուրքերի ներքին քաղաքականությանն առնչվող քննարկումները, սահմանադրական փոփոխությունների արդյունքները, ինչպես նաև երիտթուրքերի ցուցաբերած ազգային և կրոնական անհանդուժողականության դրսևորումները:

Երրորդ գլուխը՝ «Հայազգի պատգամավորների գործունեությունը 1912-1915թթ» բաղկացած է երեք ենթագլուխներից: Այստեղ լուսաբանված են իթիլյաֆի կառավարման ընթացքում Արևմտյան Հայաստանում սկիզբ առած ջարդերը և Հայկական հարցի վերարծարծման ընթացքում հայ պատգամավորների կառուցողական քայլերը: Ներկայացված են խորհրդարանի ընտրությունները, պատրիարքարանի՝ իթթիհատի հետ բանակցությունները, և հայերի ներկայացվածությունը խորհրդարանում: Բացահայտված են 1914թ. երրորդ գումարման խորհրդարանի ֆինանսական, վարչական և ռազմական բնույթի ժամանակավոր օրենքների իրական նպատակները և հայ պատգամավորների զգուշավոր կեցվածքը: Բացահայտված են սահմանադրական փոփոխությունների և Հայոց Մեծ Եղեռնի իրականացման միջև պատճառահետևանքային կապը, երիտթուրքերի կողմից խորհրդարանական մակարդակում հայոց ցեղասպանության ծրագրավորված լինելը, և հայ պատգամավորների գործունեությունը Մեծ եղեռնի օրերին:

Եզրակացություններ:

1. Չնայած սահմանադրական կարգերի վերահաստատմանը և որոշակի քաղաքական ու քաղաքացիական ազատությունների հռչակմանը, երիտթուրքերը կոպտորեն ոտնահարեցին օսմանյան հպատակների հիմնարար իրավունքները: Ընտրությունների անհավասար պայմանները և ընտրակեղծիքները երևան հանեցին նրանց իրական նպատակները՝ խորհրդարանական մեծամասնության ապահովումը և իշխանության ստվերային հակակշռումը: Ընտրությունների ընթացքը և արդյունքները չէին կարող գոհացնել արևմտահայությանը: Առաջին գումարման օսմանյան խորհրդարանի հայազգի տասներկու պատգամավորների թվաքանակը չէր համապատասխանում կայսրության հայ բնակիչների ընդհանուր թվին:

2. Խորհրդարանական խմբերի և խմբակցությունների ձևավորումը տեղի ունեցավ առաջին իսկ նստաշրջանում: Հայ պատգամավորները ցուցաբերեցին նախաձեռնողականություն և մասնակցեցին դրանց ձևավորմանը: Նրանք աչքի ընկան նաև անհատական ակտիվությամբ՝ սահմանադրական կարգերի կայացման և ամրապնդման համար կարևոր բոլոր օրինագծերի քննարկումներում: Հայազգի պատգամավորները փորձեցին հավասարակշռված քաղաքականություն վարել օսմանյան խորհրդարանում հայտնված բոլոր ժողովուրդների և կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

3. 1909թ. կիլիկիահայերի կոտորածների վերաբերյալ խորհրդարանական քննարկումներում հայ պատգամավորները հանդես եկան միասնական ճակատով: Չնայած օսմանյան խորհրդարանում մեծամասնություն կազմող իթթիհատականների հարուցած խոչընդոտներին, հայ պատգամավորներին հաջողվեց բացահայտել Ադանայի ջարդերը

իրագործողներին և պատասխանատվության ենթարկել հանցագործների մի մասին: Ավելին՝ հայազգի պատգամավորների ջանքերի շնորհիվ կազմվեցին երկու հանձնախմբեր՝ կառավարական և խորհրդարանական: Ադանայի ոճրագործության իրական պատկերը բացահայտեց հայազգի իթթիհատական պատգամավոր Հ. Պապիկյանը: Նա դրսևորեց հիացմունքի արժանի խիզախում և կյանքով հատուցեց սահմռկեցուցիչ բացահայտումների համար՝ չթաքցնելով իր կուսակցական ընկերների մեղսակցությունը: Այսուհանդերձ, խորհրդարանը Ադանայի ջարդերին քաղաքական և իրավական գնահատական չտվեց:

4. Խորհրդարանի ձևավորումից հետո հայ պատգամավորներն իրենց գործունեության գլխավոր խնդիրը համարում էին արևմտահայության հողային հարցի լուծումը: Հայ պատգամավորներ Գ. Տեր-Կարապետյանը և Ն. Տաղավարյանը, ընդգրկվելով «Հողային գրավումների հանձնաժողովում», ուսումնասիրեցին հարցի էությունը և հողային զավթումների վերաբերյալ անհերքելի փաստեր ներկայացրեցին խորհրդարանին: Սակայն երիտթուրքերն ամենևին էլ ցանկություն չունեին վերադարձնել հայերից ապօրինաբար խլված հողերն ու գույքը: Հողային հարցի լուծման ուղղությամբ օրենսդրական նախաձեռնությունների մերժումը կամ կեղծ խոստումներով շրջանցելը վկայում էին, որ իթթիհատականները որդեգրել էին հայերին հայրենազրկելու համակարգված քաղաքականություն:

5. Հայ պատգամավորները ակտիվորեն ներգրավվեցին Օսմանյան կայսրության վարչատնտեսական օրինագծերի մշակմանը և քննարկումներին: Նրանք հանդես եկան Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստող օրինագծերով: Երիտթուրքերի կողմից տնտեսական զարգացմանը խթանող օրինագծերի մերժումը վկայում էր, որ նրանք դեմ էին հայկական նահանգներում նոր աշխատատեղերի ստեղծմանն ու ենթակառուցվածքների զարգացմանը: Արևմտահայության արտագաղթը խթանելու նպատակով իթթիհատը պատրաստ էր ամայացնել Արևմտյան Հայաստանը: Դրա համար էլ մերժում էր նաև հարկային օրենսդրությունը փոփոխելու հայ պատգամավորների նախաձեռնությունները:

6. Անցագրային ռեժիմի խստացման նպատակով ընդունված նոր օրենքներով երիտթուրքական իշխանությունները հասան Արևմտյան Հայաստանի նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատմանը: Սկսած 1910թ. մարդկանց տեղաշարժը արձանագրվելու էր նաև տեղական իշխանությունների կողմից, ինչը դառնում էր Արևմտյան Հայաստանը հայաթափելու ծրագրերի իրականացման լրացուցիչ լծակ: Նույն նպատակն էր հետամտում փոստային ծառայությունը նախարարության վերածելու նոր օրենքը, որի շնորհիվ երիտթուրքերը հնարավորություն ստացան վերահսկողություն հաստատել փոստային առաքումների և լրահոսի նկատմամբ: Օրենքի կիրարկման հետևանքով ցեղասպանության տարիներին տեղեկատվությունը, անգամ նամակագրությունը, հայկական նահանգներից մայրաքաղաք չէր հասնում:

7. Հայազգի պատգամավորներն առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերել դատահիրավական և մարդու հիմնարար իրավունքներին նվիրված օրինագծերի քննարկումների նկատմամբ: Նրանք կարևորել են կայսրությունը իրավական պետության վերածելու գործընթացը, քանի որ դրանում տեսնում էին որոշակի երաշխիքներ արևմտահայության իրավունքների պաշտպանության համար: Դրանով պետք է բացատրել կանանց իրավունքների պաշտպանության, հանրահավանքների և ցույցերի ազատությունը սահմանափակող օրինագծերի քննարկումներում հայազգի պատգամավորներ Գ. Զոհրապի, Վարդգեսի, Կ. Փաշայանի, Ա. Պոշկեզենյանի և Վ. Պարտիզպանյանի ակտիվ

մասնակցությունը: Հայ պատգամավորների ջանքերով խորհրդարանը օրենքով արգելեց կանանց և աղջիկների առևանգումները, բռնի իսլամացումները և զինված հավաքները:

8. Հայ պատգամավորներն ակտիվ մասնակցություն ունեցան «Ոչ մահմեդականների զորակոչի մասին» օրինագծի քննարկումներին: Չնայած օսմանյան խորհրդարանի մահմեդական ազգայնամոլ հատվածի համառ դիմադրությանը, այնուամենայնիվ օրենքն ընդունվեց, ինչը սկզբունքային էր հպատակների իրավահավասարության և ոչ մահմեդականների ազգային արժանապատվության տեսակետներից: Հաջողվեց հասնել նաև զինվորական հարկի չեղարկմանը, թեպետ հետագայում երիտթուրքերը զինակոչի պարտադրեցին նաև նրանց, ովքեր նախորդող տարիներին արդեն մուծել էին զինվորական հարկը: Օրենսդրական մակարդակով չամրագրվեցին քրիստոնյաների ազգային, կրոնական և լեզվական իրավունքները:

9. Անշուշտ, այս տարիների ընթաքում հայազգի պատգամավորներն ունեցան նաև քաղաքական վրիպումներ: Արևմտահայության խնդիրները ներկայացնելը դրվատելի էր, սակայն միամտություն էր տարիներ շարունակ հուսալ, թե երիտթուրքերը երբևէ պատրաստ կլինեն ապակենտրոնացման սկզբունքների կիրառմանը: Հայ պատգամավորների կարևոր թերացումը խորհրդարանը լուծարելու իրավասությունը վարչապետին տրամադրելուն կողմ քվեարկելն էր: Առաջին գումարումն ավարտվեց վարչապետի կողմից խորհրդարանի վաղաժամ լուծարումով: Իրականում ընթացակարգի պարզեցմամբ վարչապետին խորհրդարանը լուծարելու իրավասություն տալը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ամբողջատիրական վարչակարգի արմատավորում: Գործադիր իշխանության լիազորությունների ընդլայնման հետևանքով խորհրդարանը դարձավ կառավարության կցորդը:

10. 1912թ. խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերի իրականացրած ընտրախախտումներն արևմտահայության համար ունեցան բացասական հետևանքներ: Այդ ընտրություններն աննախադեպ էին ընտրակեղծարարության ծավալով: Մասնավորապես՝ ընտրատարածքները ձևավորեցին այնպես, որ հայերը զրկվեն իրենց թվաքանակին համապատասխան հայազգի պատգամավորներ ունենալու հնարավորությունից, վարչական լծակների կիրառմամբ հաստատվեց վախի մթնոլորտ, այլազգի ընտրիչների թվաքանակի կամայական կրճատման հաշվին ուռճացվեց երկրորդ կարգի թուրք ընտրողների թիվը և այլն: Հակահայ քարոզչությունը տվեց ցանկալի արդյունք՝ խորհրդարանում հայ պատգամավորների թիվը կրճատվեց՝ հասնելով տասի:

11. Երկրորդ գումարման խորհրդարանի կարճատև գոյության ընթացքում հայազգի պատգամավորներն աչքի ընկան արևմտահայության խնդիրները բարձրաձայնելով, քննարկումներով և բանավեճերով: Նրանք դարձյալ փորձեցին դրական արդյունքներ գրանցել հողային հարցի լուծման գործում, սակայն իթթիհատականները հրաժարվեցին իրականացնել իրենց իսկ տված գրավոր ու բանավոր խոստումները: Երկրորդ գումարման խորհրդարանը գրեթե հարյուրօրյա գործունեությամբ վերահաստատեց իթթիհատականների խոսքի ու գործի միջև առկա հակասությունը, ինչն արտահայտվեց օրենքները կայսրության այլախոս հպատակների լեզուներով պաշտոնապես թարգմանելու արգելքում:

12. 1912թ. հուլիսին տեղի ունեցած հեղաշրջմամբ իշխանության գլուխ անցած «Հյուրիեթ վե իթիլյաֆ» կուսակցությունը չուներ Արևմտյան Հայաստանում առկա խնդիրների լուծման ծրագիր: Հեղաշրջման սկզբում պետությունը ցնցումներից զերծ պահելու նպատակով հայազգի պատգամավորները ապարդյուն փորձեր կատարեցին հաշտեցնելու կողմերին, սակայն ընթացքում տեսնելով իշխանության և ընդդիմության համառությունը՝ չեզոք դիրք գրավեցին: Ինչ վերաբերում էր իթիլյաֆական կառավարությանը վստահություն հայտնելուն,

ապա դաշնակցական պատգամավորների ձեռնպահ քվեարկելը պայմանավորված էր հայկական բարենորոգումների նկատմամբ իթիլյաֆի անորոշ դիրքորոշմամբ:

13. Բալկանյան Առաջին պատերազմի ընթացքում Հայկական հարցի վերաբացումը նաև հետևանք էր Իթթիհատի չորս տարվա հանցավոր անգործության: Արևմտյան Հայաստանում վերսկսված հայերի հողերի զանգվածային զավթումների, մարդկանց առևանգումների ու սպանությունների խնդիրները պարբերաբար բարձրացվում էին խորհրդարանում ուր անտեսում կամ լռեցնում էին հայ պատգամավորներին: 1912-1914թթ. Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական մրցապայքարում, հայկական բարենորոգումների նախագիծ մշակելու, տերությունների կողմից այն ընդունելի դարձնելու և 1914թ. ռուս-թուրքական համաձայնագրի կայացման և իրագործման փորձերում իր ներդրումն ունեցավ խորհրդարանի հայ պատգամավորների զգալի մասը: Մասնավորապես, կարելի է առանձնացնել Գ. Զոհրապին, Գ. Փաստրմաջյանին, Վարդգեսին, Վ. Փափազյանին և Պ. Հալաճյանին: Իրականում իթթիհատի միակ նպատակը հայերի հետ բանակցելով՝ միջազգային հարթակում հայկական բարենորոգումների հարցը ձախողելն էր, այլ ոչ թե իրական արդյունք գրանցելը:

14. 1914թ. գարնանը բացվում է Օսմանյան խորհրդարանի երրորդ գումարման առաջին նստաշրջանը, որն իր գործունեության ընթացքում չանդրադարձավ հայկական բարենորոգումներին: Եվ սա այն պարագայում, երբ այս նստաշրջանը հիմնականում հաստատում էր 1912-13թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ կառավարության ընդունած որոշումները: Այն, որ հայ պատգամավորները չէին բարձրաձայնում հայկական բարենորոգումների հարցը, պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ՝ օսմանյան կառավարությունը 1914թ. հունվարի 26-ին ռուսական կայսրության հետ կնքել էր համաձայնագիր, որով Ռուսաստանի առջև պարտավորվում էր իրականացնել այդ բարենորոգումները: Երկրորդ՝ եվրոպացի տեսուչների ժամանումը սրել էր թուրք ազգայմամոլների հակահայ տրամադրությունները, և հայկական բարենորոգումների արծարծումը խորհրդարանում կարող էր անկանխատեսելի հետևանքներ ունենալ արևմտահայության համար: Հայկական բարենորոգումները լռության էին մատնել նաև իթթիհատական պատգամավորները՝ նրանց համար հայկական բարենորոգումների խնդիր գոյություն չուներ:

15. Թեև Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ 1914թ. հոկտեմբերին, սակայն երրորդ գումարման խորհրդարանի ընդունած օրենքների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդրական մակարդակում երիտթուրքերը պատերազմի նախապատրաստությունները սկսել էին դեռ մայիս ամսից: Այդպիսի եզրակացության համար հիմք են տալիս ռազմական դրության պայմաններում անձնական գույքի բռնագրավման, ռազմական նախարարությանը հինգ, ռազմա-ծովային ուժերին ութ մլն ոսկի լրացուցիչ հատկացնելու, զինծառայությունից խուսափածներին վերադառնալու համար ութամսյա ժամկետ սահմանելու մասին և այլ օրենքների ընդունումը:

16. Ցեղասպանության ընթացքում հայազգի նախկին և գործող պատգամավորների գործունեության ուսումնասիրությունը վկայում է, որ նրանց ճակատագիրը կանխորոշված էր իթթիհատական հանցավոր կառավարության կողմից: Հայոց ցեղասպանության ողջ ընթացքում նրանց մեծ մասը նվիրվեց արհավիրքին դիմակայելու և ցեղասպանության ենթարկված արևմտահայության բեկորներին փրկելու պատվավոր գործին:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. **Մարտիրոսյան Ն.,** 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը և խորհրդարանի ձևավորումը Օսմանյան կայսրությունում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, № 3, էջ 86-92:
2. **Մարտիրոսյան Ն.,** Կիլիկիահայերի կոտորածի հարցը հարցը Օսմանյան խորհրդարանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, № 3, էջ 63-79:
3. **Մարտիրոսյան Ն.,** Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների դիրքորոշումը իտալա-թուրքական պատերազմի նկատմամբ, «Բանբեր հայագիտության», 2018, № 2, էջ 78-88:
4. **Մարտիրոսյան Ն.,** The Ashrafs in the Ottoman Parliament, «Բանբեր հայագիտության», 2021, № 1, էջ 86-95:
5. **Մարտիրոսյան Ն.,** Հողային հարցի լուծման ուղիներն ըստ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների (1910-1912թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2021, № 2, էջ 195-209:
6. **Մարտիրոսյան Ն., Մարտիրոսյան Լ.,** Ազգային-կրոնական անհանդուրժողականության դրսևորումներն օսմանյան խորհրդարանում (1910-1912թթ.), «Էջմիածին», 2022, № 4, էջ 109-122:
7. **Մարտիրոսյան Ն.,** Հայկական հարցը 1912-1914թթ.: Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը, «Պատմություն և մշակույթ», 2022, № 2, էջ 135-152:
8. **Մարտիրոսյան Ն.,** The collapse of empires in the 20th century, new states and new identities. The prevention act of the Armenian deputies of the Ottoman Parliament against the collapse of the empire, «Armenian State Pedagogical University (Yerevan, Armenia), Faculty of History and Social Sciences. University of Lille (Lille, France), Center for studies in Civilization, Languages and Foreign Letters (CECILLE)». 2020, էջ 29-39:

МАРТИРОСЯН НАРЕК МИКАЕЛОВИЧ

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ ДЕПУТАТОВ ОСМАНСКОГО ПАРЛАМЕНТА 1908-1915 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита диссертации состоится 18-го ноября 2025 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Целью диссертации является изучение деятельности армянских депутатов османского парламента в 1908–1915 гг. Для этого мы поставили перед собой следующие задачи:

- рассмотреть процесс реализации избирательного права в Османской империи, представить структуру формирующегося османского парламента, организаторов и исполнителей резни киликийских армян в 1909 г., основываясь на деятельности парламентской комиссии, возглавляемой армянским депутатом Акопом Папикяном;
- представить резонанс парламента на общеимперские судебно-правовые, административно-экономические и социальные проблемы, а также усилия армянских депутатов по улучшению социально-экономического положения Западной Армении;
- в ходе парламентских обсуждений рассмотреть вопрос борьбы армянских депутатов за решение земельного вопроса, имеющего жизненно важное значение для западных армян;
- осветить непримиримую политику младотурок в отношении представителей иных наций;
- дать оценку деятельности армянских депутатов и позиции младотурок в процессе возобновления Армянского вопроса в 1912–1914 гг.;
- осветить парламентские выборы 1914 г. и роль Константинопольского Армянского Патриаршества в вопросе избрания армянских депутатов;
- представить осуществленный «Иттихадом» геноцид, жертвой которого стали западные армяне и часть армянских депутатов османского парламента.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных первоисточников и литературы.

Во **введении** обоснованы актуальность темы, цель и задачи диссертации, представлены научная новизна, прикладное значение, методологическая основа, хронологические рамки работы и краткий обзор первоисточников и литературы.

Первая глава – «Установление конституционных порядков в Османской империи» – состоит из трех параграфов. Представлены попытки сотрудничества оппозиционных политических сил Османской империи, подготовка и осуществление младотурецкого переворота, а также характеристика парламентских выборов, структура и состав парламента. Освещены позиции младотурок в отношении инициатив армянских депутатов. Рассмотрены резня киликийских армян и деятельность председателя парламентской следственной комиссии А. Папикяна.

Вторая глава – «Османский парламент в 1910–1912 гг.» включает пять параграфов. Представлены законы, разработанные фракциями и отдельными депутатами, направленные на решение или игнорирование социально-экономических проблем, существующих в Османской империи после восстановления конституционных порядков. Рассмотрены законопроекты, касающиеся безопасности личности и имущества османских подданных, защиты их прав, а также принятие недоработанного закона о воинской повинности немусульман. Проанализирован земельный вопрос, поднятый армянскими депутатами. Представлены дискуссии, касающиеся внутренней политики младотурок, результаты конституционных преобразований, а также проявления национальной и религиозной нетерпимости со стороны младотурок.

Третья глава – «Деятельность армянских депутатов в 1912–1915 гг.» – состоит из трех параграфов. В ней освещаются предпринятые в Западной Армении погромы в период правления Итиляфа и конструктивные действия армянских депутатов в процессе возобновления Армянского вопроса. Представлены парламентские выборы, переговоры Патриаршества с «Иттихадом» и представительство армян в парламенте. Выявлены истинные цели временных законов финансового, административного и военного характера, принятых парламентом третьего созыва в 1914 г., и нерешительные действия армянских депутатов. Рассмотрена причинно-следственная связь между конституционными преобразованиями и осуществлением Геноцида армян, запланированность Геноцида армян младотурками на парламентском уровне и деятельность армянских депутатов в дни Геноцида.

В **заключении** представлены основные результаты исследования.

MARTIROSYAN NAREK MIKAYEL

THE ACTIVITIES OF ARMENIAN DEPUTIES IN THE OTTOMAN PARLIAMENT IN 1908-1915.

Dissertation for the degree of Doctor of history on the specialization of "History of Armenia" 07.00.01
The Defense of the Dissertation will be held on November 18, 2025 at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History 004 of HESC RA by the Institute of History of the National Academy of Science RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave., 24/4).

RESUME

The aim of the dissertation is to study the activities of the Armenian deputies of the Ottoman Parliament in 1908-1915. For this purpose, we have set ourselves the following tasks:

- To reveal the process of exercising the right to vote in the Ottoman Empire, to present the structure of the newly formed Ottoman Parliament. To address the organizers and perpetrators of the 1909 massacre of the Armenians of Cilicia, taking as a basis the activities of the parliamentary committee headed by the Armenian deputy Hakob Papikyan.
- To study the references of the parliament to the pan-imperial judicial, administrative, economic and social problems and the efforts of the Armenian deputies to improve the socio-economic situation of Western Armenia. To present the struggle of the Armenian deputies in parliamentary discussions for the solution of the land issue of vital importance for the Western Armenians. To shed light on the intolerant policy of the Young Turks towards foreigners.
- To evaluate the activities of Armenian deputies and the position of the Young Turks during the revival of the Armenian Question in 1912-1914. To shed light on the 1914 parliamentary elections and the role of the Armenian Patriarchate of Constantinople in the election of Armenian deputies. To present the genocide committed by the Ittihad, which claimed the lives of Western Armenians and some of its current deputies.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of sources and literature used.

The **introduction** substantiates the relevance, purpose, and problems of the topic, presents the scientific novelty, applied significance, methodological basis, chronological boundaries, and a brief review of the sources and literature of the dissertation.

The first chapter, "**The Establishment of Constitutional Order in the Ottoman Empire,**" consists of three subchapters. The attempts of the opposition political forces of the Ottoman Empire to cooperate,

the preparation and implementation of the Young Turk coup, are presented. The characteristics of the parliamentary elections, the structure and composition of the parliament are also given. The positions of the Young Turks towards the initiatives of the Armenian deputies are highlighted. The massacres of the Armenians of Cilicia and the activities of the chairman of the parliamentary investigative committee H. Papikyan are examined.

The second chapter, "**The Ottoman Parliament in 1910-1912**", consists of five subchapters. The draft laws authored by factions and individual deputies aimed at solving or circumventing the socio-economic problems existing in the Ottoman Empire after the re-establishment of the constitutional order are presented. The bills related to the security of the person and property of Ottoman subjects, the protection of their rights, as well as the adoption of the incomplete law on military service of non-Muslims by the parliament are considered. The land issue raised by the Armenian deputies is discussed. The discussions related to the internal policy of the Young Turks, the results of the constitutional amendments, as well as the manifestations of national and religious intolerance shown by the Young Turks are presented.

The third chapter, "**The Activities of Armenian Deputies in 1912-1915,**" consists of three subchapters. Here, the massacres that began in Western Armenia during the rule of the Itylaf and the constructive steps of Armenian deputies during the re-examination of the Armenian Question are covered. The parliamentary elections, negotiations of the Patriarchate with the Ittihad, and the representation of Armenians in the parliament are presented. The real goals of the temporary laws of a financial, administrative, and military nature of the third convocation of the parliament in 1914 and the cautious stance of Armenian deputies are revealed. The cause-and-effect relationship between the constitutional amendments and the implementation of the Armenian Genocide, the planning of the Armenian Genocide by the Young Turks at the parliamentary level, and the activities of Armenian deputies during the days of the genocide are revealed.

The **conclusion** summarizes the main results and conclusions of the dissertation.